

Դատական գործ N: ԵՄԴ/1292/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	02-11-2009
Հայցվոր/դիմող	
Անուն	Վարշամ
Ազգանուն	Ղարիբյան
Հասցե	Եղիազարյան 40 տուն
Պատասխանող	
Անուն:	ԱրմՍվիթ ՍՊԸ
Հասցե:	Տիչինայի 136
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները վերացնելու, որպես հետևանք՝ պատասխանողի կողմից ապրանքային նշանը կրող պատկերի օգտագործումն արգելելու, ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերն ոչնչացնելուն և ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.3
Պետական տուրք:	12000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	02-11-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	Կարեն Սուրենի Ֆարխոյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	02-11-2009
Ներկայացվել է միջնորդություն:	Ապահովում կիրառելու
Բավ/մերժ:	Բավարարվել է
Որոշման ամսաթիվ:	02-11-2009
Տրվել է կատարողական թերթ:	02-11-2009
Հայցի ապահովման միջոցները:	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
Այլ նշումներ:	
Դատաքննության ամսաթիվ:	17-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	26-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	19-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	03-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-01-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	05-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	31-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-03-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	30-04-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	31-03-2010
Այլ նշումներ:	

Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	18-05-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	30-04-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:30
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	18-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-05-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	14-07-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-06-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	23-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-07-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	09-09-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-08-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	17-09-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-09-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	06-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-09-2010
Այլ նշումներ:	

Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	18-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	06-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	26-10-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	12-11-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	26-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	01-12-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-11-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	09-12-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-12-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	17-12-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-12-2010
Այլ նշումներ:	հետաձգվել է մեկ այլ հերթի:
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	01-02-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	20-01-2011
Այլ նշումներ:	2011թվականի փետրվարի 11-ին ժամը 17:00-ին

Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	2
Հայցի լուծման ամսաթիվ:	11-02-2011
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ.օր-ի 1101,1102,1103,1104,1121,1134,305,Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին օրենք
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Ղատական ակտ (վճիռ, որոշում):	<p>Գործ թիվ ԵՄԴ/1292/02/09 ք.Երևան 2011թ. Վ Ճ Ի Ռ</p> <p>Հանուն Հայաստանի Հանրապետության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող դատավոր Կ.Ֆարխոյան քարտուղարությամբ Մ.Ավագյանի մասնակցությամբ հայցվորի ներկայացուցիչ Հ.Սաֆարյանի պատասխանողների ներկայացուցիչներ Բ.Վարդանյանի Հ.Ալումյանի</p> <p>Ղռնբաց ղատական նիստում, դատարանում 2011 թվականի փետրվարի 11-ին քննեց գործն ըստ հայցի Վարչամ Արամի Ղարիբյանի / անձնագիր AH 0511087, տրված 27.11.2007 թվականին, 012-ի կողմից/ ընդդեմ «Արմսվիթ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 01241106/ և «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 01201199, պետական գրանցման վկայական 03 Ա 086664/ Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները վերացնելու՝ «Արմսվիթ» ՍՊԸ-ի և «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերն օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը կնքման պահից առջին ձևաչափով, «Արմսվիթ» ՍՊԸ- ի և «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումն արգելելու, «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և «Արմսվիթ» ՍՊԸ-ում ու «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Դիմելով դատարան հայցվորը հայտնել է, որ «Արմսվիթ» ՍՊԸ-ն իր կողմից արտադրվող հրուշակեղենի փաթեթավորման թղթերի վրա գետեղել է նաև «Շանթ» ապրանքային նշանի պատկերը: Հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից 1997 թվականից մինչև 2000 թվականն ընկած ժամանակահատվածում հաստատվել է Վարչամ Ղարիբյանի «Ղեկորատիվ կիրառական արվեստի երկ» «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ», «Դիզայնի երկեր» մի շարք ստեղծագործությունների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները: Հեղինակային իրավունքի վերը նշված բոլոր ստեղծագործություններն (օբյեկտները) ունեն մեկ տարր, անկախ դիզայնի առանձնահատկություններից դրանց բոլորի վրա գետեղվել է հայցվորի կողմից ստեղծված «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, որը հանդիսացել է հայցվորին բացառիկ հեղինակային</p>

իրավունքով պատկանող բոլոր ստեղծագործությունների անբաժանելի մասը (տարրը):

Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների գրանցման ոլորտում որպես պետական լիազորված մարմին՝ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի համաձայն հաստատվել է ՀՀ Հեղինակային իրավունքների Ազգային գործակալությունում գրանցված բացառապես Վարչամ Ղարիբյանի «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների (օբյեկտների) հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները, ՀՀ Հեղինակային իրավունքների Ազգային գործակալության կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի համաձայն հաստատվել է ՀՀ Հեղինակային իրավունքների Ազգային գործակալությունում գրանցված բացառապես Վարչամ Ղարիբյանի «Դիզայն երկեր» ստեղծագործությունների (օբյեկտների) հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները, համաձայն 06.04.1998 թվականի թիվ 00218 վկայականի, Հեղինակային իրավունքների Ազգային գործակալության կողմից 17.05.2000 թվականին տրված թիվ 4/64 տեղեկանքի (03.05.2000թ. թիվ 7/399 գրանցում) և 04.08.2000թ. թիվ 4/112 տեղեկանքի (04.08.2000թ. թիվ 7/013 գրանցում): Համաձայն «Հայհեղինակ» հեղինակային իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից տրված թիվ 07/81-27.03.2006 թվականի, թիվ 07/285-01.08.2008 թվականի և թիվ 07/416-18.11.2008 թվականի գրությունների հայցվոր Վարչամ Ղարիբյանը «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել ստորև նշված ստեղծագործությունները. «ԿՈՆՖԵՏՆԵՐ» փաթեթի դիզայն, ի պահ հանձնման համարը 08/602-14.12.2005թ., «Տիեզերք» ապրանքային նշանի դիզայն, ի պահ հանձնման համարը 08/1243-01.08.2008թ., «ՄԱԵՍՏՐՈՆ», «ԲՈՒՐՍԻՆՈ», «ԱՄԱՐԵՏՏՈ», «ԿԻՏՐՈՆ», «ԶՈՎՔ», «ԾԻԱԾԱՆ», «ՍԿՅՈՒՌԻԿ» պաղպաղակների փաթեթների դիզայն, ի պահ հանձնման համարը 08/1316-14.11.2008թ.: Հեղինակային իրավունքով հայցվորին պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկի», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52), «Դիզայնի երկեր» ստեղծագործությունների (օբյեկտների), ինչպես նաև հայցադիմումում նշված մյուս հեղինակային իրավունքի բոլոր օբյեկտների, այդ թվում հայցվորի կողմից ստեղծված պաղպաղակի էսքիզների, փաթեթավորումների ծավալային պատկերների վրա անկախ անվանումներից զետեղվել է հայցվորի կողմից ստեղծած «Շանթ» ապրանքային նշանի պատկերը: Անկախ դիզայնի առանձնահատկություններից հեղինակային իրավունքի վերը նշված բոլոր ստեղծագործություններն ունեն մեկ տարր՝ դրանց բոլորի վրա զետեղվել է «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, որը հանդիսացել է հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ստեղծագործությունների (օբյեկտների) անբաժանելի մասը (տարրը): Առանց հայցվորի համաձայնության ընկերության կողմից օգտագործվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերն իր բոլոր հատկանիշներով ամբողջովին նույնական է, արտատպված է, արտանկարված է Վ. Ղարիբյանի կողմից ավելի վաղ ստեղծված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկի», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52), «Դիզայնի երկեր» ստեղծագործությունների (օբյեկտների), ինչպես նաև հայցադիմումում նշված մյուս հեղինակային իրավունքի բոլոր օբյեկտների, այդ թվում հայցվորի կողմից ստեղծված պաղպաղակի էսքիզների, փաթեթավորման ծավալային պատկերների վրա անկախ անվանումներից զետեղված «Շանթ» ապրանքային նշանի պատկերից, որը նշված ստեղծագործությունների հետ մեկտեղ պաշտպանում է հեղինակային իրավունքի վերաբերյալ

օրենսդրությամբ և հանդիսանում է նշված բոլոր ստեղծագործությունների անբաժանելի մասը:

Խնդրել է վերացնել հայցվոր Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները, պատասխանող «Արմավիթ» ՍՊԸ-ի կողմից, որպես հետևանք արգելել «Արմավիթ» ՍՊԸ-ին «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումը, պարտավորեցնել «Արմավիթ» ՍՊԸ-ին «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել «Արմավիթ» ՍՊԸ-ում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը:

Գործի քննության ընթացքում հայցվոր Վարչամ Ղարիբյանի ներկայացուցիչ Հակոբ Սաֆարյանը ցուցմունք տվեց այն մասին, որ պատասխանող «Արմավիթ» ՍՊԸ-ի կողմից որպես ապացույց ներկայացվել է «Շանթ» ապրանքային նշանի օգտագործման վերաբերյալ «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի հետ կնքված լիցենզիոն պայմանագիրը, այսինքն «Շանթ Պյուս» ՍՊԸ-ն առանց հեղինակի համաձայնության կամ թույլտվության «Շանթ» ապրանքային նշանը լիցենզիոն պայմանագրով օգտագործման է հանձնել «Արմավիթ» ընկերությանը, որի իրավունքը չուներ: Հայցապահանջն ավելացրեց և խնդրեց վերացնել Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները, կնքման պահից առջինջ ձանձաչել «Արմավիթ» ՍՊԸ-ի և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերն օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը, արգելել «Արմավիթ» ՍՊԸ-ի և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումը, «Արմավիթ» ՍՊԸ-ին ու «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին պարտավորեցնել «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել «Արմավիթ» ՍՊԸ-ում ու «Շանթ Պյուս» ՍՊԸ-ում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը:

Պատասխանող «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Բագրատ Վարդանյանը հայցի դեմ առարկեց և ցուցմունք տվեց այն մասին, որ «Շանթ» ապրանքային նշանը սեփականությամբ պատկանում է «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին, որը հաստատվում է 12.10.1999 թվականին մտավոր սեփականության գործակալության կողմից արված թիվ 4756 վկայականով: Ապրանքանշանի գործողության ժամկետը 10.09.2008 թվականին երկարաձգվել է մինչև 22.02.2019 թվականը: «Շանթ Պյուս» և «Արմավիթ» ՍՊԸ-ների միջև կնքվել է լիցենզիոն պայմանագիր, որը 20.01.2010 թվականին ստացել է պետական գրանցում, ինչի հիման վրա ներկայումս «Արմավիթ» ՍՊԸ-ն օգտագործում է «Շանթ» ապրանքային նշանը:

Ի հիմնավորումն ստեղծագործությունների հեղինակ լինելու փաստի՝ Վարչամ Ղարիբյանը դատարան է ներկայացրել հեղինակային օբյեկտի գրանցման մասին 22.07.1997 թվականի թվագրմամբ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից տրված վկայականը, նույն կազմակերպության կողմից 17.05.2000 թվականին տրված թիվ 4/64 տեղեկանքը, 04.08.2000 թվականի թիվ 4/112 տեղեկանքը, «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից 01.08.2008 թվականին տրված հեղինակային իրավունքի օբյեկտն էլ պահ հանձնելու մասին թիվ 07285 գրությունը, «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից 27.03.2006 թվականին տրված հեղինակային իրավունքի օբյեկտն էլ պահ հանձնելու մասին թիվ 0781 գրությունը, կոնֆետների դիզայնի տեսականի առանց ամսաթվի և առանց ստորագրության փաստաթուղթը, ինչպես նաև մի շարք փաթեթավորման թղթերի պատկերներ, որոնց վրա նշված են «էլիտ Շանթ» և «Արմավիթ» ՍՊԸ-ների անվանումները:

Ներկայացված վկայականից, տեղեկանքներից «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից տրված հեղինակային իրավունքի օբյեկտն էլ պահ հանձնելու մասին փաստաթղթերից պարզ չի դառնում, թե ինչպիսի ստեղծագործությունների մասին է խոսքը, դրանք ինչպիսի պատկեր և տեսք ունեն և արդյոք «Շանթ» ապրանքանշանի պատկերն

ընդգրկված եկել է այդ ստեղծագործությունների մեջ, թե ոչ: Բացի այդ «Հայիեդինակ» ՀԿ-ի կողմից տրված փաստաթղթերը թվագրված են 2008 թվականով, իսկ «Շանթ» ապրանքային նշանը գրանցվել է «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի անվամբ 1999 թվականին, այսինքն շատ ավելի վաղ քան Վարչամ Ղարիբյանին է տրվել ստեղծագործություններն ի պահ հանձնելու մասին փաստաթղթերը: «Հայիեդինակ» ՀԿ-ի կողմից տրված փաստաթղթերն որևէ առնչություն չունեն և չեն կարող ունենալ «Շանթ» ապրանքային նշանի հետ: Վարչամ Ղարիբյանի կողմից վերաբերելի և թույլատրելի ապացույցներով չի հիմնավորում, որ նա հանդիսանում է «Շանթ» ապրանքային նշանի հեղինակը, ինչպես նաև նրա կողմից որևէ ապացույց չի ներկայացվել ի հաստատումն նրա կողմից վկայակոչված այն փաստարկի, որ «Շանթ» ապրանքային նշանը հանդիսանում է իր ստեղծագործությունների անբաժանելի մասը: Վարչամ Ղարիբյանի կողմից չի վիճարկվում «Շանթ» ապրանքային նշանի պատկանելիության և գրանցման փաստը: «Շանթ» ապրանքային նշանի գրանցումը դա վարչական ակտ է, որն իրավունք է վերապահում «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին օգտագործել գրանցված ապրանքային նշանն ինչպես նաև ապրանքային նշանի վերաբերյալ կնքել լիցենզիոն պայմանագրեր, քանի դեռ օրինական ուժի մեջ է և անվավեր չի ճանաչվել «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի անվամբ կատարված «Շանթ» ապրանքային նշանի պետական գրանցումը, ապա անօրինական չի կարող համարվել գրանցված ապրանքային նշանի օգտագործումն այդ թվում լիցենզիոն պայմանագրի կնքումը: Եթե անգամ պայմանականորեն ընդունենք, որ Վարչամ Ղարիբյանը հանդիսանում է «Շանթ» ապրանքային նշանի պատկերի հեղինակը, ապա «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի կողմից գրանցված ապրանքային նշանի օգտագործման համար ՀՀ օրենսդրությամբ չի պահանջվում հեղինակի համաձայնությունը, քանի որ ՀՀ օրենսդրությամբ նման նորմ նախատեսված չէ և հեղինակային իրավունքի և ապրանքային նշանի իրավահարաբերությունները դրանք բոլորովին իրարից տարբերվող իրավահարաբերություններ են, դրանք տարբեր են իրենց կարգավորման առարկայով և բովանդակությամբ: Ինչ վերաբերվում է «Շանթ Պյուս» և «Արմսվիթ» ՍՊԸ-ների միջև կնքված լիցենզիոն պայմանագրին, ապա այն չի կարող համարվել շինծու գործարք քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համաձայն, պայմանագիրը որպես շինծու գործարք համարելու համար թույլատրելի և վերաբերելի ապացույցների հիման վրա պետք է ապացուցվի, որ պայմանագիրը կնքվել է ոչ գործարքի կողմ հանդիսացող անձանց միջև կամ պայմանագիրն իր բովանդակությամբ չի համապատասխանում կողմերի կամահայտնությանը և կողմերն երրորդ անձանց կնքված պայմանագիրը ներկայացնում են այլ պայմանագիր, քան այն որ կնքվել է: Լիցենզիոն պայմանագրի կողմերն են հանդես եկել «Շանթ Պյուս» և «Արմսվիթ» ՍՊԸ-ները, որոնց տնօրենների կողմից ստորագրվել և կնքվել է պայմանագիրը: Կնքված պայմանագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է կողմերի կամահայտնությանը: Պայմանագրի հիման վրա «Արմսվիթ» ՍՊԸ-ն օգտագործում է ապրանքային նշանը՝ դրանք գետեղելով փաթեթավորման թղթերի վրա: Վիճարկվող պայմանագիրը որևէ առնչություն չունի Վարչամ Ղարիբյանի հետ, քանի որ այն վերաբերվում է ոչ թե հեղինակային իրավունքներին այլ «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի սեփականությամբ պատկանող ապրանքային նշանին: Վարչամ Ղարիբյանը որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ լիցենզիոն պայմանագրով քողարկվել է մեկ այլ գործարք, կամ իր պայմանագրով կողմ հանդիսանալու հանգամանքը: Բացի այդ, «Շանթ» բառը հանդիսացել է ընկերության ֆիրմային անվանումը, որն օգտագործվել է ընկերության կողմից հայերեն, անգլերեն, ռուսերեն տառերի գրառումներով, տարբեր տառատեսակներով դեռևս մինչև ապրանքային նշանի գրանցումը և այն ոչ մի դեպքում չէր կարող հանդիսանալ Վարչամ Ղարիբյանի ստեղծագործությունը: Խնդրեց հայքը մերժել:

Պատասխանող «Արմսվիթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Մելս Մանուկյանը և Հայկ Ալունյանը հայցի դեմ առարկեցին և ցուցմունքներ տվեցին այն մասին, որ «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները պատկանում են «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին: «Շանթ» ապրանքային նշանը ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում գրանցվել է 10.12.1999 թվականին և «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ին տրվել է թիվ 4756 վկայագիրը, որի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 22.02.2019 թվականը: «Արմսվիթ» ՍՊԸ-ի կողմից «Շանթ» ապրանքային նշանի օգտագործումը կատարվում է լիցենզիոն պայմանագրի շրջանակներում, քանի որ «Շանթ» ապրանքային նշանը հանդիսանում է «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի սեփականությունը: Հայցվորի կողմից դատարանին չի ներկայացվել վերաբերելի ապացույց այն մասին, որ «Շանթ» ապրանքային նշանը նրա մտավոր սեփականությունն է և իբրև հետևանք խախտվել են հայցվորի իրավունքները: Խնդրեցին հայցը մերժել:

-22.07.1997 թվականին ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից տրված հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին վկայականի համաձայն, ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում գրանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը. Դեկորատիվ կիրառման արվեստի երկ, պաղպաղակների տեսակներ և անվանումներ /թվով 52/՝ Էսկիմո շոկոլադեպատ «Ղասական», «Օսկթմ», «Ռիթմ», «Ոսկեգոծ», «Դոլար», «Այսբերգ», «Սյուրպրիզ», «Ձողիակ», «Արցախ», «Դիետ», Էսկիմո առանց գլազուրի՝ «Հյուսիս», «Մաուզի», «Մրգային», Էսկիմո մրգային գլազուրով՝ «Ելակ», «Արքայախնձոր», «Կիվի», «Բալ», «Նարինջ», «Ծիրան», «Բրիլետ», «Մեղեդի», պաղպաղակ վաֆլե բաժակներով՝ «Ջահ», «Թզուկ», «Հսկա», «Դոմինո», «Կորնետ», «Սոնետ», «Էլեգանտ», «1կգ.տոպրակ», «3կգ.տոպրակ», պլաստմասե բաժակներ՝ «Պինգվին», «Դիետ», «Դո-Ռե-Մի», «Երագ», «Ժպիտ», «Շանթ», «380գր», «Գնդակ», «Նռնակ», «Կիտրոն», «Ելակ», «Ջանգակ», թղթե բաժակներ՝ «Ֆանտազիա», «Ընտանեկան». Տորթեր՝ «Նավակ», «Հոբելյանական», «Տոնական», «Ֆանտազիա», «Հրաշք», «Ակնթարթ», «Ծննդյան», «Հարսանեկան», որի հեղինակն է հանդիսանում Վարշամ Ղարիբյանը, օբյեկտը գրանցված է ՀՀ ՀիԱԳ-ում 00172 թվի ներքո:

-17.05.2000 թվականին ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետի կողմից տրված թիվ 4/64 տեղեկանքի համաձայն, Վարշամ Ղարիբյանի «Տոնական» պաղպաղակ-տորթի դիզայնը գրանցված է հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում 2000 թվականի մայիսի 3-ին, գրանցման համարն է 7/399:

-04.08.2000 թվականին ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետի կողմից տրված թիվ 4/112 տեղեկանքի համաձայն, Վարշամ Ղարիբյանի «Սյուրպրիզ» պաղպաղակի դիզայնը գրանցված է հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում 04.08.2000 թվականին 7/013 թվի ներքո:

-ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային նշանի գրանցման թիվ 4756 վկայագրի կրկնակի համաձայն, «Շանթ» ապրանքային նշանի սեփականատեր է հանդիսանում «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ն, ապրանքներ դաս 30. պաղպաղակ, նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գունային համակցությամբ: Նշանի առաջնությունը 22.02.1999, գրանցված է պետական գրանցամատյանում 12.10.1999, գործողության ժամկետը 22.02.2009: Ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգված է մինչև 22.02.2019 թվականը:

-27.03.2006 թվականին «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության տնօրենի կողմից տրված թիվ 07/81 գրության համաձայն, հեղինակային իրավունքի օբյեկտն է պահ է հանձնված «Կոնֆետներ» ստեղծագործության անվանումը, հակիրճ նկարագրությունը՝

կոնֆետների փաթեթի դիզայն, հեղինակ՝ Ղարիբյան Վարշամ Արամի, հասցեն ք.Երևան Եղիազարյան փողոց տուն 10:
-01.08.2008 թվականին «Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության տնօրենի կողմից տրված թիվ 07/285 գրության համաձայն, հեղինակային իրավունքի օբյեկտն է պահ է հանձնված հայերեն և անգլերեն տարբերակով «Շանթ» ստեղծագործության անվանումը, հակիրճ նկարագրությունը՝ ապրանքային նշանի դիզայն, հեղինակ՝ Ղարիբյան Վարշամ Արամի, հասցեն ք.Երևան Եղիազարյան փողոց տուն 10:

-21.12.2009 թվականին «Շանթ Պլուս» ՍՊԸ-ն ի դեմ տնօրեն Մանվել Արամի Ղարիբյանի, որպես լիցենզատուի և «Արմավիթ» ՍՊԸ-ն ի դեմ տնօրեն Մկրտիչ Ղազարյանի, որպես լիցենզատուի միջև կնքված լիցենզիոն պայմանագրի 1.1 կետի համաձայն, լիցենզատուն պարտավորվում է լիցենզառուին իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրեն պատկանող ապրանքային նշանը, իսկ լիցենզառուն պարտավորվում է ապրանքային նշանը օգտագործել, պայմանագրի պայմաններին համապատասխան և վճարել ապրանքային նշանի օգտագործման համար պայմանագրով նախատեսված գումարը: Նույն պայմանագրի 1.2 կետի համաձայն, օգտագործման տրամադրվող ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները պատկանում են լիցենզատուին, որը հաստատվում է մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային նշանի գրանցման թիվ 4756 վկայագրով, համաձայն որի ապրանքային նշանի սեփականտերն է «Շանթ Պլուս» ՍՊԸ-ն, ապրանքներ դաս 30, նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գույների համակցությամբ, նշանի առաջնությունը 22.02.1999 թվականին գրանցվել է պետական գրանցամատյանում 12.10.1999 թվականին, ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվել է 10.09.2008 թ-ին մինչև 22.02.2019 թվականը:

-«Հայիեղինակ» Հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից դատարանին տրամադրվել 22.07.1997թ.-ին Վարշամ Ղարիբյանին տրված թիվ 00172 վկայականի տրման համար հիմք հանդիսացող և «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության արխիվում պահպանված նյութերի բնօրինակները:

Գնահատելով հետազոտված ապացույցները՝ կողմերի ցուցմունքները, գործում առկա փաստաթղթերը, դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Ղատաքնությամբ հաստատվեց, որ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից դեռևս 22.07.1997թ.-ին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի համաձայն հաստատվել է ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի «Ղեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների Ֆոթոէկոնոմիկա հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:

Ղատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ Կառավարության 20.06.2001թ.-ի թիվ 554 որոշման 2-րդ կետի ա/ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների Ազգային Գործակալությունը մինչև 2001թ.-ի հուլիսի 1-ը հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող «Հայիեղինակ» հասարակական կազմակերպությանն է փոխանցվել գործակալությունում գոյություն ունեցող տվյալների բազան, «Հայիեղինակ» Հասարակական կազմակերպությունից պահանջել էր դատարանին ներկայացնել 22.07.1997թ.-ին ՀԻԱԳ-ի կողմից Վարշամ Ղարիբյանին տրված վկայականում նշված «Ղեկորատիվ

կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերները: «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության կողմից դատարանին տրամադրված 22.07.1997թ.-ին Վարչամ Ղարիբջանին տրված թիվ 00172 վկայականում նշված և «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության արխիվում պահպանված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերների բնօրինակների ուսումնասիրությունից դատարանը պարզեց, որ անկախ դիզայնի առանձնահատկություններից՝ դրանց մեծամասնության վրա առկա է «Շանթ» ապրանքային նշանի պատկերը, որը հանդիսանում է Վարչամ Ղարիբջանի կողմից ի պահ հանձնված ստեղծագործությունների բաղկացուցիչ մասը: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը՝ ով ստեղծել է ստեղծագործությունը: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակային իրավունքը հեղինակի բացառիկ անձնական ոչ գույքային և բացառիկ գույքային իրավունքներն են իր ստեղծագործության նկատմամբ: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը սովորաբար ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջների համապատասխան հետազոտելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ «Հայիեղինակ» հասարակական կազմակերպության արխիվում պահպանված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերների բնօրինակները, եկավ այն համոզման, որ «Շանթ» ապրանքային նշանի պատկերը հանդիսանում է ՀՀ Հեղինակային իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարչամ Ղարիբջանին հեղինակային իրավունքով պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների էական մասը, ուստի հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1101, 1102, 1103 հոդվածները, դատարանը գտնում է, որ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները նույնպես պատկանում են ստեղծագործության հեղինակ Վարչամ Ղարիբջանին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Վերոնշյալ հոդվածի էությունը ամրագրվել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ու քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի /16 դեկտեմբեր 1966թ./ 14-րդ հոդվածի 1-ին կետի՝ բոլոր անձինք հավասար են դատարանների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա, ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացրած միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով ապա կիրառվում են այդ նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հավասար հնարավորություն է ընձեռում դատավարության կողմերին և հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինման ձևերը սահմանվում են դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա, որի ուժով կողմերը որոշում են վեճի լուծման հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները՝ հայցի իրավունքի՝ պաշտպանության միջոցների տնօրինման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը հստակ սահմանում է դատարան դիմելու իրավունքը, այն է՝ շահագրգիռ անձն իրավունք ունի տույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան իրականացնում է դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածը ուղղակի սահմանում է, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան:

ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Վերոգրալ միջազգային, սահմանադրական և ներպետական օրենսդրական իրավական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել այն եզրահանգումը, որ անձի դատական պաշտպանության իրավունքն ունի ներպետական սահմանադրական և օրենքով, ինչպես նաև միջազգային նորմերով հստակ ընդգծված պաշտպանություն:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն^ա հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավակրողն իր իրավունքները պաշտպանելու նպատակով, դատական կարգով, իր իրավունքները խախտողից կարող է պահանջել^ա

ա/ իր իրավունքների ճանաչում:

բ/ մինչև իրավախախտումը գոյություն ունեցող իրավիճակի վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.

գ/ նմանակված օրինակը, դրա բռնագրավում կամ ոչնչացում.

դ/ վնասի հատուցում, ներառյալ կորցրած օգուտը^ա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

ե/ իր իրավունքների պաշտպանության հետ կապված^ա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների կիրառում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1101-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները ծագում են դրանց ստեղծման փաստի ուժով կամ լիազորված պետական մարմնի պետական մարմնի կողմից սույն օրենքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով՝ այդ օբյեկտներին իրավական պահպանություն տրամադրելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1102-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքների հեղինակին են պատկանում այդ արդյունքների նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1103-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքների հեղինակի իրավունքը (Հեղինակության իրավունքը) անձնական ոչ գույքային իրավունք է և կարող է պատկանել միայն այն անձին, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է մտավոր գործունեության արդյունքը: 2. Հեղինակության իրավունքն անօտարելի ու անփոխանցելի է և գործում է անժամկետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1104-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:

2. Ուրիշ անձանց կողմից մտավոր սեփականության այն օբյեկտների օգտագործումը, որոնց նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է դրանց իրավատիրոջը, թույլատրվում է միայն վերջինիս համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:

Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը, մասնավորապես՝

ա) ստեղծագործության վերարտադրումը (վերարտադրման իրավունք).

բ) ստեղծագործության տարածումը (տարածման իրավունք).

գ) ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վարձույթով տալը (վարձույթով տալու իրավունք).

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1121-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները ապահովում են ստեղծագործության նկատմամբ նրա մտավոր և անձնական կապերը:

2. Հեղինակին են պատկանում ստեղծագործության նկատմամբ հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝

1) ստեղծագործության հեղինակ ճանաչվելու (հեղինակության իրավունք).

2) ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելու կամ այդպիսի օգտագործումը թույլատրելու (հեղինակի անվան իրավունք)։

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ ստեղծագործության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը³ տալով հեղինակին բացառիկ իրավունք⁴ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների ցանկացած ձևով օգտագործումը։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ։

Տվյալ պարագայում, պատասխանողներ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի և «Արմսվիթ» ՍՊԸ-ի կողմից առանց հայցվոր Վարշամ Ղարիբյանի համաձայնության, առանց նրա հետ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածով սահմանված կարգով «Հեղինակային պայմանագիր» կնքելու՝ վերջինիս հեղինակային իրավունքով պատկանող ստեղծագործությունների անբաժանելի տարրը և էական մասը կազմող «Շանթ» ապրանքային նշանը դրվել է տնտեսական շրջանառության մեջ, որով, փաստորեն, խախտվել են հայցվոր Վարշամ Ղարիբյանի բացառիկ անձնական ոչ գույքային և անձնական գույքային իրավունքները։

Անդրադառնալով «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի և «Արմսվիթ» ՍՊԸ-ի միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերը օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագրին դատարանը գտնում է, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությամբ։

2. Անձը, որը չի կատարում սույն օրենքի պահանջները, համարվում է հեղինակային իրավունքը կամ հարակից իրավունքները խախտող։

3. Առանց իրավատիրոջ թույլտվության պատրաստված կամ տարածված իրավունքի օբյեկտի օրինակները համարվում են կեղծ կամ նմանակված (կոնտրաֆակտ)։

Փաստորեն, օրենսդիրը իմպերատիվ կերպով սահմանել է, որ հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում պետք է լինի դրա հեղինակի համաձայնությամբ, իսկ առանց այդ համաձայնության հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում համարվում է օրենքի պահանջների խախտում։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առջինն է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ։

Տվյալ դեպքում «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ն և «Արմսվիթ» ՍՊԸ-ն ՀՀ Հեղինակային իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանին հեղինակային իրավունքով պատկանող «Ղեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների էական մասը հանդիսացող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը օգտագործում են օրենքի պահանջների խախտմամբ առանց Վարշամ Ղարիբյանի թույլտվության և համաձայնության։

Հիմք ընդունելով վերոգրյալը, դատարանը գտնում է, որ «Շանթ Պլյուս» ՍՊԸ-ի և «Արմավիթ» ՍՊԸ-ի միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերը օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի իմպերատիվ պահանջների խախտումներով, ուստի այն առջինն է:

Բացի այդ, Վարչամ Ղարիբյանն իր իրավունքների պաշտպանության համար հայցով դատարան է դիմել 2009 թվականի հոկտեմբերի վերջին, դատարանը հայցադիմումը վարույթ է ընդունել 02.11.2009 թվականին, մինչդեռ «Շանթ Պլյուս» ՍՊԸ և «Արմավիթ» ՍՊԸ միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերը օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը կնքվել է 21.12.2009 թվականին, այսինքն ավելի ուշ քան հայցվորը իր իրավունքների պաշտպանության համար դիմել էր դատարան, ինչը դատարանի գնահատմամբ Վարչամ Ղարիբյանի բացառիկ հեղինակային իրավունքի խախտումները քողարկելու և օրինականացնելու նպատակ է հետապնդել:

Անդրադառնալով «Արմավիթ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից դատարանում հայտնած այն դիրքորոշմանը, որ հայցվորի կողմից ներկայացված ապացույցները չեն կարող հիմք հանդիսանալ վիճարկվող պատկերի նկատմամբ Վարչամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը ճանաչելու համար, քանի որ նմանատիպ գործով կողմերի միջև առկա է եղել համանման վեճ, որի շրջանակներում Վարչամ Ղարիբյանը կրկին ներկայացրել էր նույն ապացույցները, մինչդեռ վերաքննիչ դատարանը 27.01.2010 թվականին իր կողմից կայացրած որոշմամբ գտել է, որ ներկայացված ապացույցները չեն կարող հիմք հանդիսանալ Վարչամ Ղարիբյանին վիճարկվող պատկերների հեղինակ ճանաչելու համար, դատարանը գտնում է անհիմն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն ուսումնասիրելով քաղաքացիական գործում առկա ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010թ.-ին թիվ ԵՄՂ 0636/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշումը պարզեց, որ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանը, անդրադառնալով «Բրիկետ», «Դույլ ընտանեկան», «Կոռնետ», «1 և 0,5 կիլոգրամանոց» պաղպաղակների ծավալային պատկերները ի պահ հանձնված լինելու մասի ապացույցներին և նշելով, որ դրանք ի պահ են հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ «Հայիեղինակ» հասարակական կազմակերպությունում, անտեսել է այն հանգամանքը, որ թեպետ նշված «Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության» անձնագրերում զետեղված է ՀԻԱԳ-ի անվանումը, սակայն դրանք վավերացված են Հասարակական կազմակերպության կնիքով, և գործում բացակայում է որևէ ապացույց, որով կարող է հաստատվել Հասարակական կազմակերպության՝ ՀԻԱԳ-ի իրավահաջորդ լինելու փաստը»:

Վերոգրյալի հիման վրա դատարանը հանգում է այն հետևության, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010թ.-ի որոշմամբ կասկածի տակ է դրել վկայակոչած ապացույցների ապացուցողական նշանակությունը այն պարզ պատճառով, որ գործի շրջանակներում չի հիմնավորվել Հեղինակային Իրավունքի Ազգային Գործակալության և «Հայիեղինակ» Հասարակական կազմակերպության միջև փոխադարձ կապը: Մինչդեռ սույն գործի շրջանակներում դատարանն արդեն իսկ անրադարձել է այդ իրավական խնդրին՝ նշելով, որ ՀՀ Կառավարության 20.06.2001թ.-ի թիվ 554 որոշման 2-րդ կետի ա/ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության մինչև 2001թ.-ի հուլիսի 1-ը հեղինակների զույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող «Հայիեղինակ» հասարակական կազմակերպությանն է փոխանցվել գործակալությունում գոյություն ունեցող տվյալների բազան:

Պատասխանող «Արմսվիթ» ՍՊԸ ներկայացուցիչը ապացույցների հետազոտման ժամանակ դատարանում հայտնեց նաև այն դիրքորոշումը, որ «Հայիեդինակ» Հասարակական կազմակերպության կողմից դատարանին ներկայացված փաստաթղթերը չեն կարող ապացուցողական նշանակություն ունենալ, քանի որ դրանց մի քանիսի վրա առկա է 1998 թվականին «Շանթ» ԼՏԸ-ին տրված «որակի ասպարեզում ՀՀ կառավարության մրցանակի» պատկերը և այդ պատկերները չէին կարող Հեղինակային Իրավունքի Ազգային Գործակալությանը հանձնված լինելին 1997 թվականին:

Ղատարանը պատասխանողի վերը նշված դիրքորոշումը նույնպես անհիմն է համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ. Չնայած «Հայիեդինակ» Հասարակական կազմակերպության կողմից դատարանին տրամադրված 22.07.1997 թվականին Վարչամ Ղարիբյանին տրված թիվ 00172 վկայականում նշված և «Հայիեդինակ» հասարակական կազմակերպության արխիվում պահպանված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերների բնօրինակներից մի քանիսի վրա առկա է 1998 թվականին «Շանթ» ԼՏԸ-ին տրված «որակի ասպարեզում ՀՀ կառավարության մրցանակի» պատկերը, սակայն այդ հանգամանքը չի կարող ազդել նշված պատկերների՝ ստեղծագործությունների նկատմամբ Վարչամ Ղարիբյանի հեղինակային իրավունքի վրա, քանի որ, ստեղծագործությունը հեղինակի ստեղծագործ գործունեության հետևանքով մարդկային զգացմունքների ընկալման համար կոնկրետ ձևով արտահայտված և վերարտադրության հնարավորություն տվող գաղափարների, մտքերի, կերպարների ամբողջությունն է: Այն ոչ նյութական բարիք է, մարդկանց հոգևոր գործունեության արդյունք, մարդու մտավոր գործունեության ոչ նյութական արդյունք՝ ստեղծագործություն է համարվում ոչ թե ստեղծված նյութական արդյունքը (քանդակ, արձան, գեղանկար, փաթեթավորման թուղթը և այլն), այլ դրանում մարմնավորված ստեղծագործական միտքը:

Մտավոր գործունեության արդյունքները, ի տարբերություն իրային առարկաների, մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունք են (իրենցից ներկայացնում են ոչ նյութական բարիքներ), որոնք պատկերային, տառային, թվային, ձայնային միջոցներով, այլ նշանների, խորհրդանիշերի տեսքով կարող են ամրագրվել որոշակի նյութական կրիչների վրա (կտավ, քար, թուղթ, ժապավեն և այլն): Նյութական կրիչները առարկաներ են, որոնց վրա արտացոլվելով, ոչ նյութական ստեղծագործությունը օբյեկտիվորեն ընկալելի, շոշափելի ձև է ստանում, դրա հետևանքով մտավոր գործունեության օբյեկտը դառնում է հեղինակային իրավունքի օբյեկտ, իսկ ստեղծագործության հեղինակը դրա նկատմամբ ձեռք է բերում բացառիկ իրավունքներ, այդ թվում^a նաև անձնական գույքային: Անգամ այն դեպքերում, երբ ստեղծագործության և դրա նյութական կրիչի միջև գոյություն ունի անխզելի փոխկապակցվածություն (օրինակ, ստեղծված կտավի և գեղանկարչի ստեղծագործական աշխատանքի միջև), այնուհանդերձ, նյութական կրիչը սեփականության իրավունքի ինքնուրույն օբյեկտ է, իսկ դրանում մարմնավորված ոչ նյութական բարիքը^a մտավոր սեփականության (հեղինակային իրավունքի) ինքնուրույն օբյեկտ, այդ իսկ պատճառով ստեղծագործության պատկերը կրող փաթեթավորման թղթի վրա առկա 1998 թվականին «Շանթ» ԼՏԸ-ին տրված «որակի ասպարեզում ՀՀ կառավարության մրցանակի» պատկերը, ինքնին չի բացառում 1997 թվականին կամ դրանից ավելի վաղ Վարչամ Ղարիբյանի կողմից այդ պատկերները ստեղծագործելու և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքներ ձեռք բերելու հանգամանքը, հատկապես, որ «Հայիեդինակ» Հասարակական կազմակերպության կողմից դատարանին տրամադրված 22.07.1997 թվականին Վարչամ Ղարիբյանին տրված թիվ 00172 վկայականում նշված և «Հայիեդինակ» հասարակական կազմակերպության արխիվում

	<p>պահպանված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերների բնօրինակներից մեծամասնության վրա առկա չեն 1998 թվականին «Շանթ» ԼՏԸ-ին տրված «որակի ասպարեզում ՀՀ կառավարության մրցանակի» պատկերը:</p> <p>«Հայիեղինակ» Հասարակական կազմակերպության կողմից դատարանին ուղղված գրությամբ «Հայիեղինակ» Հասարակական կազմակերպությունը հայտնել է, որ 22.07.1997 թվականին Վարչամ Ղարիբյանին տրված թիվ 00172 վկայականում կան անվանումներ որոց պատկերները արխիվում չեն պահպանվել:</p> <p>Տվյալ դեպքում դատարանը գտնում է, որ 22.07.1997 թվականին ՀԻԱԳ-ի կողմից Վարչամ Ղարիբյանին տրված վկայականում նշված «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» (թվով 52) ստեղծագործությունների պատկերները, ինչպես ՀԻԱԳ-ի այնպես էլ «Հայիեղինակ» Հասարակական կազմակերպության արխիվում պատշաճ չեն պահպանվել, իսկ դրա բացասական հետևանքները չի կարող կրել ի պահ հանձնված ստեղծագործությունների հեղինակը:</p> <p>Պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:</p> <p>Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 130-132, 137, 140 և 1401 հոդվածներով դատարանը</p> <p>Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>Հայցը բավարարել:</p> <p>Վերացնել հայցվոր Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները պատասխանողներ «Արմավիթ» ՍՊԸ-ի և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ի կողմից՝</p> <p>«Շանթ Պյուս» ՍՊԸ-ի և «Արմավիթ» ՍՊԸ-ի միջև 21.12.2009 թվականին կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերը օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը ճանաչել առջինից:</p> <p>Արգելել պատասխանողներ «Արմավիթ» ՍՊԸ-ին և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումը:</p> <p>Պարտավորեցնել «Արմավիթ» ՍՊԸ-ին և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից:</p> <p>Պարտավորեցնել «Արմավիթ» ՍՊԸ-ին և «Շանթ Պյուս» ՍՊԸ-ին ոչնչացնել ընկերությունում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը:</p> <p>Պետական տուրքի հարցը համարել լուծված:</p> <p>Վճիռը կանոնի չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով պարտապանի հաշվին:</p> <p>Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում:</p>
	Դատավոր Կ.Ֆարխոյան
Դատական ակտի ամսաթիվը:	11-01-2011
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	24-03-2011

Էջերի քանակը:	հատոր 1-ին 122 էջ, հատոր 2-րդ 132 էջ, հատոր 3-րդ 183 էջ
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	24-03-2011
Էջերի քանակը:	3 հատոր
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաք.
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	.
Ամսաթիվ:	28-03-2011
Պատական Գործ N: ԵՄՂ/1292/02/09	
Ամսաթիվ:	14-03-2011
Բողոք բերող անձը	
Անուն:	Շանթ Պյուս ՍՊԸ
Հասցե:	ք.Երեվան, Լենինականի փ., 12շ.
Ներկայացուցիչ	
Անուն	Բագրատ
Ազգանուն	Վարդանյան
Հասցե	ք.Երեվան
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանողի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	
Գործի համարը:	
Ամսաթիվ:	28-03-2011
Վիճակագրական տողի համարը:	5.3
Գործի համարը:	
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	1-122,2-132,3-183
Գործը ստացվել է:	Մալաթիա-Սեբաստիա

Ամսաթիվ:	29-03-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նարինե Տարիելի Բարսեղյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արսեն Սամվելի Մկրտչյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նոյեմ Հովսեփյան
Այլ նշումներ:	
Երբ: 04-04-2011	
Որոշումը ուղարկվել է կողմերին:	05-04-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	05-04-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	28-04-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-04-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	322
Ամսաթիվ:	12-05-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	322
Այլ:	
Ամսաթիվ:	12-05-2011
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	Այլ
Դատական ակտը բեկանվել է մասնակի:	Փոփոխվել է ստորադաս դատարանի դատական ակտը
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ 1292/02/09 ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2011 թվականի վճիռ Նախագահող դատավոր^ա Կ. Ֆարխոյան</p>

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով^ա

նախագահող դատավոր՝ Ն. ԲԱՐՍԵՂՅԱՆ
դատավորներ՝ Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

2011 թվականի մայիսի 12-ին, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործով ըստ հայցի Վարչամ Արամի Ղարիբյանի ընդդեմ «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության՝ Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները վերացնելու՝ «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերն օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը կնքման պահից առջին ձանաչելու, «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումն արգելելու, «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և «Արմավիթ» ՍՊ ընկերությունում ու «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2011թ. թիվ ԵՄԴ 1292/02/09 վճռի դեմ պատասխանողներ «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության կողմից բերված վերաքննիչ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան^ա հայցվորը խնդրել է վերացնել հայցվորի^ա Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները, կնքման պահից առջին ձանաչել «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերն օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը, արգելել «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումը, «Արմավիթ» ՍՊ ընկերությանը ու «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությանը պարտավորեցնել «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել «Արմավիթ» ՍՊ ընկերությունում ու «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2011թ. թիվ ԵՄԴ /1292/02/09 վճռով հայցը բավարարվել է:
Սույն գործով վերաքննիչ բողոք են ներկայացրել պատասխանողներ «Արմավիթ» ՍՊ ընկերությունը և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը:
Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.«Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը[©]

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.
Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը: Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

«Հեղինակային իրավունքների ազգային գործակալության» կողմից 22.07.1997 թվականին Հայցվորին տրված «Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին» թիվ 00172 վկայականը (այսուհետ նաև՝ Վկայական) գնահատելիս, դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չի գնահատել այդ գրավոր ապացույցը:

Մինչդեռ, այդ ապացույցի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման արդյունքում դատարանը պետք է որ հաշվի առներ, որ նշված վկայականում նշված է՝

«Սույնով հաստատվում է, որ ՀՀ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ գրանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԿ, ՊԱՂՊԱՂԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ (թվով 52)»:

Այնուհետև թվարկված են պաղպաղակների տեսակները՝ 1. ԵՍԿԻՍՈ ՇՈԿՈԼԱԴԱՊՊԱՏ, 2. ԵՍԿԻՍՈ ԱՌԱՆՑ ԳԼԱԶՈՒՐԻ, 3. ԵՍԿԻՍՈ ՍՐԳԱՅԻՆ ԳԼԱԶՈՒՐՈՎ, 4. ՊԱՂՊԱՂԱԿ ՎԱՖԼԵ ԲԱԺԱԿՆԵՐՈՎ... »:

Յուրաքանչյուր տեսակի առջև թվարկված են այդ տեսակի պաղպաղակների անվանումները՝ «Դասական», «Օսկար» և այլն: Պաղպաղակի տեսակների և անվանումների նկատմամբ Հայցվորի իրավունքների գրանցումը որևէ կերպ չի առնչվում այդ պաղպաղակների փաթեթավորման թղթերի դիզայնի հետ:

Հետևաբար, նշված վկայականից որևէ կերպ չի կարող բխեցվել որոշակի դիզայն ունեցող պաղպաղակի փաթեթների նկատմամբ Հայցվորի հեղինակ լինելու հանգամանքը:

Դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ վերը նշված վկայականը ստորագրված չէ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետի կողմից, այլ դրա վրա դրված է «Հայիեղինակ» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Ներսիսյանի ստորագրությունը: Մինչդեռ գործով չի պարզվել և դատարանի վճռում պատասխան չի տրվել այն հարցին, թե «Հայիեղինակ» ՀԿ-ի նախագահը նման վկայականներ տալու առումով ի՞նչ լիազորություններ ուներ վկայականը տալու պահին 22.07.1997 թվականին:

Գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, թե ի՞նչ արտաքին տեսք են ունեցել 22.07.1997 թվականի Վկայականում թվարկված պաղպաղակները: Դատարանը ապացուցված է համարել, որ Վկայականում թվարկված պաղպաղակների (դրանց փաթեթների) արտաքին տեսքը համապատասխանում է «Հայիեղինակ» ՀԿ-ի արխիվում պահվող նույն անվանումներով փաթեթների արտաքին տեսքին: Ըստ էության, վճիռն ամբողջությամբ կառուցված է այն թեզի վրա, որ Վկայականում թվարկված պաղպաղակների փաթեթները այդ վկայականի տրման ժամանակվանից պահվել են ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում և հետագայում՝ ՀՀ Կառավարության 20.06.2001 թվականի թիվ 554 որոշման հիման վրա հանձնվել են «Հայիեղինակ» ՀԿ-ին:

Փաթեթավորման թղթերի պատշաճ ուսումնասիրության և վերլուծության դեպքում պարզվում է, որ դրանց վրա բացակայում է որևէ նշում այն մասին, որ դրանք հանձնված են եղել ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությանը Վկայականի տրման ժամանակաշրջանում և որ դրանք որևէ կապ ունեն վկայականում նշված պաղպաղակների դիզայնի հետ: Վճռի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Հայցվորն այդ փաթեթների դիզայնը (այդ թվում՝ դրանց վրա առկա «Շանթ» ապրանքային նշանը) ստեղծել է նախքան «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության իրավունքի

գրանցումը: Հետևապես, գործի համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ե՞րբ են ստեղծվել գործում առկա «Հայիեդինակ» ՀԿ-ի կողմից տրամադրված փաթեթավորման թղթերը:

Այդ փաթեթավորման թղթերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման դեպքում պարզ է դառնում, որ դրանց մի մասը (այդ թվում նրանք, որոնց անվանումները թվարկված են 22.07.1997 թվականի Վկայականում) պարզապես չէին կարող ստեղծված լինել 1997 թվականին, քանի որ դրանց վրա առկա է ՀՀ Կառավարության կողմից սահմանված մրցանակի պատկերը, որը «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը ստացել է ՀՀ Վարչապետից 12.11.1998 թվականին: Այսպիսով, եթե նշված փաթեթավորման թղթերը ՀՀ հեդինակային իրավունքների ազգային գործակալությունում կամ «Հայիեդինակ» ՀԿ-ում հայտնվել են միաժամանակ, ապա բացառվում է դրանցից որևէ մեկի կապը Վկայականում նշված պաղպաղակների հետ: Իսկ եթե դրանք վերը նշված կազմակերպություններում հայտնվել են տարբեր ժամանակաշրջաններում, ապա ոչ Հայցվորը, ոչ «Հայիեդինակ» ՀԿ-ի ղեկավարը և ոչ էլ դատարանը չեն պատասխանել այն հարցին, թե կոնկրետ ե՞րբ են դրանք ներկայացվել Հայցվորի կողմից այդ կազմակերպություններին: Խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջը, դատարանը չի նշել այն ապացույցները, որոնց հիման վրա եկել է այն հետևության, թե գործում առկա փաթեթավորման թղթերը ստեղծված են եղել մինչև «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի գրանցումը:

Անդրադառնալով «Արմավիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրին, դատարանը գտել է, որ այն առոչինչ է, քանի որ կնքվել է քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի և «Հեդինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի իմպերատիվ պահանջների խախտումներով:

Տվյալ դեպքում դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը՝ գործարքի անվավերության հիմքերը շփոթելով առոչնչության հիմքերի հետ (ընդ որում, վիճահարույց գործարքը անվավեր ճանաչելու պահանջ Հայցվորը չի ներկայացրել, հետևապես, այդպիսի հարց սույն գործի շրջանակներում առհասարակ քննարկվել չի կարող):

Հայցվորը չի վիճարկել ա) ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի 12.10.1999 թվականի գրանցումը պետական գրանցամատյանում. բ) 10.09.2009 թվականին ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի գրանցման երկարաժամկետ մինչև 22.02.2019թ.-ը. գ) լիցենզատու «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության և լիցենզառու «Արմավիթ» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրի գրանցման մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 20.01.2010 թվականի որոշումը:

Այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, իր մի շարք որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «...եթե վարչական ակտը չի վիճարկվել, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ^a անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորության շրջանակներում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, մասնավորապես պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Դատարանն իր վճռում ուղղակիորեն հակասել է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշմանը, ինչով խախտել է ՀՀ

դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջը: Մասնավորապես, դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գոյություն ունեն ուժի մեջ գտնվող և չվիճարկվող վարչական ակտեր, որոնցով գրանցված են Պատասխանողների իրավունքները «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ: Նման վարչական ակտերի առկայության դեպքում, երբ Պատասխանողների կողմից այդ ապրանքային նշանի օգտագործումը պաշտպանվում է օրենքով, դատարանը կասկածի տակ է դրել նշված վարչական ակտերը, գրկելով Պատասխանողներին այդ վարչական ակտերի բարենպաստ ազդեցությունից օգտվելու հնարավորությունից: Ղատարանի վճռով «Շանթ» ապրանքային նշանի իրավատիրոջը՝ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությանը, ում իրավունքների գրանցումը չի վիճարկվում, արգելվել է ինչպես տիրապետումը և օգտագործումը, այնպես էլ՝ տնօրինումը: Ղատարանի վճիռն այսպիսով ուղղակիորեն հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածին: Նույնը նաև «Արմսվիթ» ՍՊ ընկերության դեպքում, քանի որ, առանց լիցենզային պայմանագրից բխող իրավունքների գրանցումը վիճարկելու, առանց այն կասկածի տակ դնելու, դատարանի վճռով պարզապես արգելվել է «Շանթ» ապրանքային նշանի օգտագործումը: Ղատարանի վճիռն ուղղակիորեն հակասում է նույն կողմերի միջև մեկ այլ գործով (գործ թիվ ԵՄԴ 0636/02/09)՝ վերաքննիչ քաղաքացիական գործով 27.01.2010 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմանը ևս (տես^a նշված որոշումը և այդ կապակցությամբ «Արմսվիթ» ՍՊԸ ներկայացուցչի գրավոր բացատրությունը): Խնդրել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵՄԴ/1292/02/09 գործով 11.02.2011 թվականին կայացված վճիռն ամբողջությամբ բեկանել, այն փոփոխել և Վարչամ Ղարիբյանի հայցը մերժել՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ, կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.1.«Արմսվիթ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը©

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.
Ղատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը: Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.
«Հեղինակային իրավունքների ազգային գործակալության» կողմից 22.07.1997 թվականին Հայցվորին տրված «Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին» թիվ 00172 վկայականը (այսուհետ նաև՝ Վկայական) գնահատելիս, դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չի գնահատել այդ գրավոր ապացույցը:
Մինչդեռ, այդ ապացույցի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման արդյունքում դատարանը պետք է որ հաշվի առներ, որ նշված վկայականում նշված է՝
«Սույնով հաստատվում է, որ ՀՀ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ գրանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԿ, ՊԱՂՊԱՂԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ (թվով 52)»:
Այնուհետև թվարկված են պաղպաղակների տեսակները՝ 1. ԷՍԿԻՍՈ ՇՈԿՈԼԱԴԱՊԱՏ, 2. ԷՍԿԻՍՈ ԱՌԱՆՑ ԳԼԱԶՈՒՐԻ, 3. ԷՍԿԻՍՈ ՍՐԳԱՅԻՆ ԳԼԱԶՈՒՐՈՎ, 4. ՊԱՂՊԱՂԱԿ ՎԱՖԼԵ ԲԱԺԱԿՆԵՐՈՎ... »:
Յուրաքանչյուր տեսակի առջև թվարկված են այդ տեսակի

պաղպաղակների անվանումները՝ «Ղասական», «Օսկար» և այլն: Պաղպաղակի տեսակների և անվանումների նկատմամբ Հայցվորի իրավունքների գրանցումը որևէ կերպ չի առնչվում այդ պաղպաղակների փաթեթավորման թղթերի դիզայնի հետ: Հետևաբար, նշված վկայականից որևէ կերպ չի կարող բխեցվել որոշակի դիզայն ունեցող պաղպաղակի փաթեթների նկատմամբ Հայցվորի հեղինակ լինելու հանգամանքը:

Ղատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ վերը նշված վկայականը ստորագրված չէ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետի կողմից, այլ դրա վրա դրված է «Հայիեղինակ» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Ներսիսյանի ստորագրությունը: Մինչդեռ գործով չի պարզվել և դատարանի վճռում պատասխան չի տրվել այն հարցին, թե «Հայիեղինակ» ՀԿ-ի նախագահը նման վկայականներ տալու առումով ի՞նչ լիազորություններ ուներ վկայականը տալու պահին՝ 22.07.1997 թվականին:

Գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, թե ի՞նչ արտաքին տեսք են ունեցել 22.07.1997 թվականի վկայականում թվարկված պաղպաղակները: Ղատարանը ապացուցված է համարել, որ վկայականում թվարկված պաղպաղակների (դրանց փաթեթների) արտաքին տեսքը համապատասխանում է «Հայիեղինակ» ՀԿ-ի արխիվում պահվող նույն անվանումներով փաթեթների արտաքին տեսքին: Ըստ էության, վճիռն ամբողջությամբ կառուցված է այն թեզի վրա, որ վկայականում թվարկված պաղպաղակների փաթեթները այդ վկայականի տրման ժամանակվանից պահվել են ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում և հետագայում՝ ՀՀ Կառավարության 20.06.2001 թվականի թիվ 554 որոշման հիման վրա հանձնվել են «Հայիեղինակ» ՀԿ-ին:

Փաթեթավորման թղթերի պատշաճ ուսումնասիրության և վերլուծության դեպքում պարզվում է, որ դրանց վրա բացակայում է որևէ նշում այն մասին, որ դրանք հանձնված են եղել ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությանը վկայականի տրման ժամանակաշրջանում և որ դրանք որևէ կապ ունեն վկայականում նշված պաղպաղակների դիզայնի հետ: Վճռի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Հայցվորն այդ փաթեթների դիզայնը (այդ թվում՝ դրանց վրա առկա «Շանթ» ապրանքային նշանը) ստեղծել է նախքան «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի գրանցումը: Հետևապես, գործի համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ե՞րբ են ստեղծվել գործում առկա «Հայիեղինակ» ՀԿ-ի կողմից տրամադրված փաթեթավորման թղթերը:

Այդ փաթեթավորման թղթերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման դեպքում պարզ է դառնում, որ դրանց մի մասը (այդ թվում նրանք, որոնց անվանումները թվարկված են 22.07.1997 թվականի վկայականում) պարզապես չէին կարող ստեղծված լինել 1997 թվականին, քանի որ դրանց վրա առկա է ՀՀ Կառավարության կողմից սահմանված մրցանակի պատկերը, որը «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը ստացել է ՀՀ Կարչապետից 12.11.1998 թվականին: Այսպիսով, եթե նշված փաթեթավորման թղթերը ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում կան «Հայիեղինակ» ՀԿ-ում հայտնվել են միաժամանակ, ապա բացառվում է դրանցից որևէ մեկի կապը վկայականում նշված պաղպաղակների հետ: Իսկ եթե դրանք վերը նշված կազմակերպություններում հայտնվել են տարբեր ժամանակաշրջաններում, ապա ոչ Հայցվորը, ոչ «Հայիեղինակ» ՀԿ-ի ղեկավարը և ոչ էլ դատարանը չեն պատասխանել այն հարցին, թե կոնկրետ ե՞րբ են դրանք ներկայացվել Հայցվորի կողմից այդ կազմակերպություններին: Խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջը, դատարանը չի նշել այն ապացույցները, որոնց հիման վրա եկել է այն հետևության, թե գործում առկա

փաթեթավորման թղթերը ստեղծված են եղել մինչև «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի գրանցումը:

Անդրադառնալով «Արմսվիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրին, դատարանը գտել է, որ այն առաջին է, քանի որ կնքվել է քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի իմպերատիվ պահանջների խախտումներով:

Տվյալ դեպքում դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը՝ գործարքի անվավերության հիմքերը շփոթելով առաջնության հիմքերի հետ (ընդ որում, վիճահարույց գործարքը անվավեր ճանաչելու պահանջ Հայցվորը չի ներկայացրել, հետևապես, այդպիսի հարց սույն գործի շրջանակներում առհասարակ քննարկվել չի կարող):

Հայցվորը չի վիճարկել ա) ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի 12.10.1999 թվականի գրանցումը պետական գրանցամատյանում. բ) 10.09.2009 թվականին ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության իրավունքի գրանցման երկարաձգումը մինչև 22.02.2019թ.-ը. գ) լիցենզատու «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության և լիցենզառու «Արմսվիթ» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրի գրանցման մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 20.01.2010 թվականի որոշումը:

Այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, իր մի շարք որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «...եթե վարչական ակտը չի վիճարկվել, չի հաստատվել դրա առաջին լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ^a անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորության շրջանակներում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, մասնավորապես պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Դատարանն իր վճռում ուղղակիորեն հակասել է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշմանը, ինչով խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջը: Մասնավորապես, դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գոյություն ունեն ուժի մեջ գտնվող և չվիճարկվող վարչական ակտեր, որոնցով գրանցված են Պատասխանողների իրավունքները «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ: Նման վարչական ակտերի առկայության դեպքում, երբ Պատասխանողների կողմից այդ ապրանքային նշանի օգտագործումը պաշտպանվում է օրենքով, դատարանը կասկածի տակ է դրել նշված վարչական ակտերը, գրկելով Պատասխանողներին այդ վարչական ակտերի բարենպաստ ազդեցությունից օգտվելու հնարավորությունից:

Դատարանի վճռով «Շանթ» ապրանքային նշանի իրավատիրոջը՝ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությանը, ում իրավունքների գրանցումը չի վիճարկվում, արգելվել է ինչպես տիրապետումը և օգտագործումը, այնպես էլ՝ տնօրինումը: Դատարանի վճիռն այսպիսով ուղղակիորեն հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածին: Նույնը նաև «Արմսվիթ» ՍՊ ընկերության դեպքում, քանի որ, առանց լիցենզային պայմանագրից բխող իրավունքների գրանցումը վիճարկելու, առանց այն կասկածի տակ դնելու, դատարանի վճռով պարզապես արգելվել է «Շանթ» ապրանքային նշանի օգտագործումը:

Դատարանի վճիռն ուղղակիորեն հակասում է նույն կողմերի միջև մեկ այլ գործով (գործ թիվ ԵՄԴ 0636/02/09)՝ վերաքննիչ քաղաքացիական գործով 27.01.2010 թվականին կայացված և

օրինական ուժի մեջ մտած որոշմանը ևս (տես^a նշված որոշումը և այդ կապակցությամբ «Արմսվիթ» ՍՊԸ ներկայացուցչի գրավոր բացատրությունը):

Խնդրել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵՄԴ/1292/02/09 գործով 11.02.2011 թվականին կայացված վճիռն ամբողջությամբ բեկանել, այն փոփոխել և Վարչամ Ղարիբյանի հայցը մերժել՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ, կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3.Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը©

- 22.07.1997թ. ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից տրված հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին վկայականի համաձայն, ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում գրանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը. դեկորատիվ կիրառական արվեստի երկ, պաղպաղակների տեսակներ և անվանումներ /թվով 52/, որի հեղինակն է հանդիսանում Վարչամ Ղարիբյանը, օբյեկտը գրանցված է ՀՀ ՀՒԱԳ-ում 00172 թվի ներքո. (հատոր 1, գ.թ. 30)

- ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային նշանի գրանցման թիվ 4756 վկայագրի պատճենի համաձայն, «Շանթ» ապրանքային նշանի սեփականատեր է հանդիսանում «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը: Նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գունային համակցությամբ: Նշանի առաջնությունը 22.02.1999թ. գրանցվել է պետական գրանցամատյանում 12.10.1999թ., երկարաձգվել է մինչև 22.02.2019թ.-ը. (հատոր 1, գ.թ. 92)

- 21.12.2009թ. «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության ի դեմս տնօրեն Մանվել Արամի Ղարիբյանի, որպես լիցենզատուի և «Արմսվիթ» ՍՊ ընկերության, ի դեմս տնօրեն Մկրտիչ Ղուկասյանի, որպես լիցենզառուի միջև կնքված լիցենզիոն պայմանագրի 1.1 կետի համաձայն, լիցենզատուն պարտավորվում է լիցենզառուին իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրեն պատկանող ապրանքային նշանը, իսկ լիցենզառուն պարտավորվում է ապրանքային նշանն օգտագործել պայմանագրի պայմաններին համապատասխան և վճարել ապրանքային նշանի օգտագործման համար պայմանագրով նախատեսված գումարը: Նույն պայմանագրի 1.2 կետի համաձայն, օգտագործման տրամադրվող ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները պատկանում են լիցենզատուին, որը հաստատվում է մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային նշանի գրանցման թիվ 4756 վկայագրով, համաձայն որի ապրանքային նշանի սեփականատերն է «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերությունը, «ապրանքներ դաս 30»: Նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գույների համակցությամբ, նշանի առաջնությունը 22.02.1999թ. գրանցվել է պետական գրանցամատյանում 12.10.1999թ., ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվել է 10.09.2008թ.-ից մինչև 22.02.2019թ.-ը. (հատոր 1, գ.թ. 94-95)

- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010թ. թիվ ԵՄԴ 0636/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշումը, որը ստացել է օրինական ուժ:

4.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննում է բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, իրավասու է անդրադառնալ միայն այն հարցերին, որոնք վերաբերում են գործին մասնակցող անձանց, սույն վեճի առարկային, բխում են հայցի հիմքերից, և որոնց վերաբերյալ բողոք բերած անձը հայտնել է իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ:

Ըստ հայցվոր Վարչամ Ղարիբյանի վերջինս հանդիսանում է մի շարք ստեղծագործությունների հեղինակ և այդ ստեղծագործությունների անբաժանելի մասն է հանդիսանում «Շանթ» ապրանքային նշանը: «Շանթ» ապրանքային նշանն առանց հայցվորի համաձայնության դրվել է տնտեսական շրջանառության մեջ, որով խախտվել են Վարչամ Ղարիբյանի հեղինակային իրավունքները:

Ի հիմնավորումն ստեղծագործությունների հեղինակ լինելու փաստի^ա Վարչամ Ղարիբյանը դատարան է ներկայացրել հեղինակային օբյեկտի գրանցման մասին 22.07.1997թ.-ի թվագրմամբ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից տրված վկայականը, նույն կազմակերպության կողմից 17.05.2000թ.-ին տրված թիվ 4/64 տեղեկանքը, 04.08.2000թ.-ի թիվ 4/112 տեղեկանքը, «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից 01.08.2008թ.-ին տրված հեղինակային իրավունքի օբյեկտն էլ պահ հանձնելու մասին թիվ 07/285 գրությունը, «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից 27.03.2006թ.-ին տրված հեղինակային իրավունքի օբյեկտն էլ պահ հանձնելու մասին թիվ 07/81 գրությունը, կոնֆետների դիզայնի տեսականի առանց ամսաթվի և առանց ստորագրության փաստաթուղթը, ինչպես նաև մի շարք փաթեթավորման թղթերի պատկերներ, որոնց վրա նշված են «Էլիտ Շանթ» և «Արմսվիթ» ՍՊ ընկերությունների անվանումները: Բողոքաբերի` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ պահանջը քննելիս Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Բողոքաբերի վկայակոչած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով ապացույցների գնահատումն ըստ էության երաշխիք է ճշմարտությունը բացահայտելու և արդարադատության խնդիրների իրականացման համար: Ընդ որում` դատարանի կողմից կատարված ապացույցների հետազոտումը կարող է օբյեկտիվ համարվել բացառապես այն դեպքում, երբ դատարանը բոլոր ապացույցները վերլուծել է բազմակողմանի և լրիվ վերադրվ: Ապացույցները համարվում են բազմակողմանի վերլուծված, եթե դատարանը հաշվի է առել գործի բոլոր մասնակիցների դիրքորոշումները, իսկ ապացույցների լրիվ հետազոտություն հասկացությունը ենթադրում է գործի հետ կապված բոլոր հանգամանքների, ինչպես նաև գործով ձեռք բերված բոլոր ապացույցների իրավական վերլուծություն:

Ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամեն դեպքում դատարանի գնահատմանը կարող են արժանանալ միայն քաղաքացիական գործում առկա ապացույցները, որոնք պետք է գնահատվեն իրենց համակցության մեջ և այդ ապացույցների գնահատումը պետք է հիմնված լինի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

Նշվածը հիմք ընդունելով Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ ՀՀ «Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին» թիվ 00172 վկայականում թվարկված են բացառապես պաղպաղակների տեսակներն ու անվանումները: Ինչպիսի դիզայն, կամ որ նույնն է ինչպիսի փաթեթավորման թղթեր և ինչպիսի արտաքին տեսք են ունեցել տվյալ վկայականում թվարկված փաթեթավորման թղթերը չի հետևում ոչ միայն 22.07.1997թ.-ի «Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին» թիվ 00172 վկայականից, այլև գործով ներկայացված

ապացույցներից:

Ինչ վերաբերում է գործում առկա փաթեթավորման թղթերին, ապա դրանց պատշաճ ուսումնասիրության և վերլուծության դեպքում պարզվում է, որ դրանց վրա բացակայում է որևէ նշում այն մասին, որ դրանք ստեղծված, առավել ևս հանձնված են եղել ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությանը^ա վկայականի տրման ժամանակաշրջանում և որ դրանց դիզայնը նույնական է վկայականում նշված արտադրատեսակների դիզայնի հետ:

Ընդհանուր իրավասության դատարանը հայցվորի կողմից ներկայացված վերը հիշատակված ապացույցների հետազոտության արդյունքում արձանագրել է, որ «Շանթ» ապրանքային նշանի պատկերը հանդիսանում է ՀՀ հեղինակային իրավունքի ազգային գործակալությունում գրանցված բացառապես Վարչամ Ղարիբջանին հեղինակային իրավունքով պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» /թվով 52/ ստեղծագործությունների էական մասը և գտել, որ «Շանթ» ապրանքային նշանի պատկերի նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները նույնպես պատկանում են ստեղծագործությունների հեղինակ Վարչամ Ղարիբջանին:

Գործի նյութերով հիմնավորվել է, որ դեռևս 12.10.1999թ.-ին «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության իրավունքը ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից ենթարկվել է գրանցման պետական գրանցամատյանում: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը: Նույն օրենսգրքի 65-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

Անդրադառնալով ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշված խնդրի առնչությամբ իրականացված ապացույցների գնահատմանը և արտահայտած իրավական դիրքորոշմանը, Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վերը հիշատակված հոդվածների լույսի ներքո և գործում առկա ապացույցների գնահատման արդյունքում դեռևս հնարավոր չէ արձանագրել, որ ստեղծագործությունների ծավալային պատկերի վրա գետեղված «Շանթ» ապրանքային պատկերը հանդիսանում է ստեղծագործությունների էական մաս և որ դրա նկատմամբ հեղինակային բացառիկ իրավունքները պատկանում են Վարչամ Ղարիբջանին: Գործում բացակայում է որևէ ապացույց այն առնչությամբ, թե ի՞նչ արտաքին տեսք են ունեցել 22.07.1997թ.-ին «Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին» թիվ 00/172 վկայականում թվարկված ապրանքատեսակները, ինչից ելնելով հնարավոր չէ անդրադառնալ նշված ժամանակահատվածում ստեղծված ապրանքատեսակների դիզայնին, առավել ևս փաստել, որ «Շանթ» ապրանքային պատկերը հանդիսացել է այդ ստեղծագործությունների ԷԱԿԱՆ ՄԱՍ-ը:

ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված ապրանքային նշանի գրանցման թիվ 4756 վկայագրի համաձայն, «Շանթ» ապրանքային նշանի սեփականատեր է հանդիսանում «Շանթ Պյուս» ՍՊ ընկերությունը, «ապրանքներ դաս 30. պաղպաղակ»: Նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գունային համակցությամբ: Նշանի առաջնությունը 22.02.1999թ. գրանցվել է պետական գրանցամատյանում 12.10.1999թ.: Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվել է 10.09.2008թ.-ին մինչև 22.02.2019թ.-ը: 21.12.2009թ. «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության, որպես լիցենզատուի և «Արմսվիթ» ՍՊ ընկերության, որպես լիցենզառուի միջև կնքվել է լիցենզիոն պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն, լիցենզատուն պարտավորվել է լիցենզառուին իրավունք տրամադրել իր

ծեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրեն պատկանող ապրանքային նշանը, իսկ լիցենզառուն պարտավորվել է ապրանքային նշանն օգտագործել, պայմանագրի պայմաններին ամսապատասխան և վճարել ապրանքային նշանի օգտագործման համար պայմանագրով նախատեսված գումարը: Առկա է լիցենզատու «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության և լիցենզառու «Արմսվիթ» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրի գրանցման մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 20.01.2010թ.-ի որոշումը:

Անդրադառնալով «Արմսվիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագրին, դատարանը գտել է, որ այն առջինն է, քանի որ կնքվել է քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ հոդվածի և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի իմպերատիվ պահանջների խախտումներով:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առկա են վերը նշված վարչական ակտերը: Դրանք անվավեր չեն ճանաչվել, չի հաստատվել դրանց առջինն լինելը, հետևաբար չի կարող որևէ կերպ վիճարկվել «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության կողմից «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ ունեցած իրավունքները, առջինն կամ անվավեր ճանաչվել «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության կողմից «Արմսվիթ» ՍՊ ընկերության հետ հիշյալ ապրանքային նշանի օգտագործմանն ուղղված պայմանագիրը, ինչպես նաև արգելվել «Արմսվիթ» ՍՊ ընկերության ու «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես² 21.12.2006թ. թիվ 3-2440 (ՎԴ) որոշմամբ անդրադառնալով նույնաբնույթ հարցի³ արձանագրել է. «Սույն քաղաքացիական գործով նշված վարչական ակտը չի վիճարկվել, չի հաստատվել դրա առջինն լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ⁴ անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական ակտն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորության շրջանակներում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ վարչական ակտն իրավաչափ է, և որևէ անձ, մասնավորապես պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Դատարանն իր վճռում ուղղակիորեն հակասել է ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշմանը, ինչով խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջը: Մասնավորապես, դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գոյություն ունեն ուժի մեջ գտնվող և չվիճարկվող վարչական ակտեր, որոնցով գրանցված է Պատասխանողների իրավունքները «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ: Նման վարչական ակտերի առկայության դեպքում, երբ Պատասխանողների կողմից այդ ապրանքային նշանի օգտագործումը պաշտպանվում է օրենքով, դատարանը կասկածի տակ է դրել նշված վարչական ակտերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաև այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

Վիճարկվող վճռով «Շանթ» ապրանքային նշանի իրավատիրոջը⁵ «Շանթ Պյուս» ՍՊ ընկերությանը, արգելվել է ինչպես ապրանքային նշանի տիրապետումն ու օգտագործումը, այնպես էլ տնօրինումը, ինչն ուղղակի հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Նույնը նաև «Արմսվիթ» ՍՊ ընկերության դեպքում: Անտեսելով «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության և «Արմսվիթ» ՍՊ ընկերության միջև կնքված լիցենզային պայմանագիրը և տվյալ պայմանագրի գրանցման մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 20.01.2010թ.-ի որոշումը, «Արմսվիթ» ՍՊ ընկերությանն անհիմն

կերպով արգելվել է «Շանթ» ապրանքային նշանի օգտագործումը: Բողոքարկվող վճիռն ուղղակիորեն հակասում է նույն կողմերի միջև մեկ այլ (գործ թիվ ԵՄԴ 0636/02/09) քաղաքացիական գործով 27.01.2010 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշմանը ևս: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 27.01.2010թ. քննելով թիվ ԵՄԴ 0636/02/09 քաղաքացիական գործն ըստ հայցի Վարչամ Ղարիբյանի ընդդեմ «Արմսվիթ» ՍՊ ընկերության^ա հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որոշել է Մ. Ղուկասյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ 0636/02/09 քաղաքացիական գործով 2009թ. սեպտեմբերի 24-ին կայացրած վճիռը բեկանել և փոփոխել. Վարչամ Ղարիբյանի հայցը մերժել: ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը և որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Վերը շարադրվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված^ա ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու վերաքննիչ դատարանի լիազորությունը, հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության շահերից: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ, 220-րդ հոդվածներով և 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության և «Արմսվիթ» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքները բավարարել: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 11.02.2011թ. թիվ ԵՄԴ 1292/02/09 վճիռը բեկանել մասնակի և այն փոփոխել. Վարչամ Ղարիբյանի հայցն ընդդեմ «Արմսվիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության՝ Վարչամ Ղարիբյանի հեղինակային բացառիկ իրավունքների խախտումները վերացնելու՝ «Արմսվիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության միջև կնքված «Շանթ» ապրանքանշանի պատկերն օգտագործելու վերաբերյալ լիցենզիոն պայմանագիրը կնքման պահից առջին ճանաչելու, «Արմսվիթ» ՍՊ ընկերության և «Շանթ Պյուս» ՍՊ ընկերության կողմից «Շանթ» ապրանքային նշանի պատկերների օգտագործումն արգելելու, «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և «Արմսվիթ» ՍՊ ընկերությունում ու «Շանթ Պյուս»

	<p>ՍՊ ընկերությունում պահվող «Շանթ» ապրանքային նշանի պատկերները կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին^ա մերժել:</p> <p>2. Վարչամ Ղարիբյանից հոգուտ «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության և «Արմավիթ» ՍՊ ընկերության բնագանձել 10 000-ական ՀՀ դրամ, որպես վերջիններիս կողմից նախապես վճարված վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահանված պետական տուրքի գումար:</p> <p>3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճարեկության կարգով:</p> <p>Նախագահող դատավոր դատավոր դատավոր Ն. ԲԱՐՍԵՂՅԱՆ Ն. ՀՐՎԱՅԹՅԱՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ</p>
<p>Դատական ակտի ամսաթիվը:</p>	<p>12-05-2011</p>
<p>Ակտով հոգուտ պետ. քյուջեի բնագանձման ենթակա պետ.:</p>	<p>10 000-ական ՀՀ դրամ</p>